

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝
2011 թվականի նոյեմբերի 3-ի նիստի N 4 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ.-

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2011 թվականի բյուջեի նախահաշվում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Ձեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Կ.Լ.Աթոյան:

Ձեկուցողը նշեց. համալսարանի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել 2011 թվականի հաստատված բյուջեի նախահաշվում կատարել փոփոխություններ՝ ըստ ծախսային հոդվածների: Նախահաշվի 6-րդ հոդվածով՝ սննդի ձեռքբերման ծախսեր (ներառվում են N 1 սննդի կետի, Ձեյթունի մասնաշենքում գտնվող սննդի կետի և Դիլիջանի ճամբարի սննդի կատարած ծախսերը), որոնց մասով ստացվել են եկամուտներ նաև սննդի վաճառքից և Դիլիջանի տոմսերի վաճառքից: Համեմատելով 2010 թվականի նախահաշվի համապատասխան հոդվածի հետ, նկատվում է ակնհայտ տարբերություն՝ փաստացի ծախսերը կազմել էին 5,3 մլն ՀՀ դրամ (Դիլիջանի ճամբարի սննդի ձեռքբերումը կազմակերպվել էր համալսարանի արհմիության կողմից): Նախահաշվի 7-րդ հոդվածով՝ գործուղման և ծառայողական շրջագայության ծախսեր, նախատեսվածից կատարվել է տնտեսում, որի արդյունքում, մասամբ, ծախսերը պակասեցվել են 2 մլն ՀՀ դրամի չափով:

Նախահաշվի 16., 16.4.1., 16.9., 17.2. և 17.4. հոդվածներով կատարվել են տնտեսումներ, որոնց արդյունքում, մասամբ, ծախսերը պակասեցվել են համապատասխանաբար՝ 28 մլն, 5 մլն, 2,5 մլն, 8 մլն և 4,5 մլն ՀՀ դրամ:

Քանի որ 2011 թվականի նախահաշվով սոցմշակության ոլորտների պահպանման ծախսերի համար նախատեսվել էր 4 մլն դրամ, իսկ կատարված ծախսերը գերազանցում են, հետևաբար ծախսերն ավելացվել են 6 մլն դրամի չափով՝ ներառելով Դիլիջանի մարզաառողջարարական ճամբարի և համալսարանի մարզադահլիճի ընդհանրացված ծախսերը:

Նախահաշվի 16.10. հոդվածով՝ այլ կազմակերպություններին և անձանց օգնության և նվիրատվության ծախսեր, նախատեսված 18 մլն դրամին ավելացվել է ևս 26 մլն դրամ, քանի որ միայն 2011 թվականի ընթացքում արդեն տրվել են՝

- 1) ՀԵՀ-ին՝ 25 մլն դրամ ֆինանսական աջակցություն,
- 2) համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղին՝ 6,5 մլն դրամ,
- 3) Վ.Խոջաբեկյանի ֆիլմի պատրաստման համար՝ 1,5 մլն դրամ,
- 4) անվանական կրթաթոշակ և ֆիզիկական անձանց օգնություն,
- 5) ԿԳՆ-ին՝ 1,2 մլն դրամ օգնություն:

Համեմատելով 2010 թվականի համապատասխան հոդվածի հետ՝ փաստացի ծախսերը կազմել էին 19,2 մլն դրամ:

2011 թվականի նախահաշվով նախատեսվել էր ուսանողական խորհրդի միջոցառումների ծախսեր՝ 2 մլն դրամի չափով, սակայն 2011 թվականի առաջին կիսամյակի վերջին չափաբաժինը լրացվել է և 2011 թվականի երրորդ եռամսյակում համալսարանի միջոցներից ծախսվել է ևս 1,4 մլն դրամ: Քանի որ ուսանողական խորհուրդը իրականացնելու է մի շարք միջոցառումներ մինչև տարեվերջ, հետևաբար նախատեսված միջոցառումների համար ծախսերն ավելացվել են 4,5 մլն դրամի չափով: Ընդամենը՝ ուսանողական խորհրդի միջոցառումների ծախսերին ավելացել է 6 մլն դրամ: Համեմատելով 2010 թվականի համապատասխան հոդվածի հետ՝ նախատեսված 6 մլն դրամից ուսանողական խորհուրդը համալսարանի միջոցների հաշվին կատարել էր 1,7 մլն դրամի ծախս:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հաստատել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2011 թվականի բյուջեի նախահաշիվը՝ կատարված փոփոխություններով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն):

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2011 թվականի բյուջեի նախահաշիվը՝ կատարված փոփոխություններով, կցվում է:

ՀՊՏՀ խորհրդի նախագահ

Հովիկ Աբրահամյան

ՀՊՏՀ խորհրդի քարտուղար

Նաիրա Դարբինյան

03.11.2011 թ.

ք. Երևան

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության
2011 թվականի բյուջեի նախահաշիվը՝ կատարված փոփոխություններով**

N	Ցուցանիշներ	2011 թվականի հաստատված տարեկան բյուջեն			2011 թվականի բյուջեի փոփոխություններ		Փոփոխման արդյունքում		
		Բյուջետային ֆինանսավորում	Սեփական միջոցներ	Ընդամենը	Ավելացում (սեփական միջոցների հաշվին)	Պակասեցում (սեփական միջոցների հաշվին)	Բյուջետային ֆինանսավորում	Սեփական միջոցներ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	6. սննդի ձեռքբերման ծախսեր		6,000	6,000	12,000			18,000	18,000
2.	7. գործուղման և ծառայողա-կան շրջագալության ծախսեր	2,500	9,500	12,000		2,000	2,500	7,500	10,000
3.	16. այլ ծախսեր	11,300	79,700	91,100		28,000	11,300	51,700	63,000
4.	16.4.1. դասախոսական կազմի վերապատրաստման ծախսեր		6,000	6,000		5,000		1,000	1,000
5.	16.5. սոցմշակության օբյեկտների պահպանման ծախսեր		4,000	4,000	6,000			10,000	10,000
6.	16.9. թերթեր, ամսագրեր	1,000	4,000	5,000		2,500	1,000	1,500	2,500
7.	16.10. այլ կազմակերպություններին և անձանց օգնության և նվիրատվության ծախսեր		18,000	18,000	26,000			44,000	44,000
8.	16.12. ուսանողական խորհրդի միջոցառումների ծախսեր		2,000	2,000	6,000			8,000	8,000
9.	17.2. սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	2,600	22,400	25,000		8,000	2,600	14,400	17,000
10.	17.4. այլ հիմնական միջոցների ձեռքբերման ծախսեր (գրականություն, տնտեսական գույք և այլն)	2,600	25,400	28,000		4,500	2,600	20,900	23,500
	Ընդամենը	20,000	177,000	197,000	50,000	50,000	20,000	177,000	197,000